## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

# ԹՈՒՂԹ ՅԵՐՈՒՍԱՂԵՄԷ Ի ՀԱՅՍ ՎԱՍՆ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԱՐԾՐՈՒՆԵԱՑ

*Ի ժամանակս Յուստի[նիա]նոսի(1) կայսեր, յերեսներորդի երրորդի(2) ամի(3) թագաւորութեան նորա, էր խաղաղութիւն ի քաղաքին Երուսաղէմի և յամենայն Եկեղեցիսն Աստուծոյ։ Զի եպիսկոպոսք և քահանայք և ամենայն ուխտ սրբոյ Եկեղեցւոյ, որպէս(4) հօր(5) վառեալք ի պաշտօն յուղիղ հաւատս, եկաւք և բնակաւք(6), ազգաւք և մեծամեծաւք Երուսաղէմի։ Իսկ քարքատեացն սատանայ(7), մախացեալ ընդ իրսն, կամէր եղծանել(8) զկուսաւոր կարգս Եկեղեցւոյ, զոր սրբոց հարցն կարգեալ, և երանելւոյն Կիւրղի հաստատեալ։*

*Եղև զի չարախորհուրդ հրեայ մի(9), համակամ բանսարկուին, բանսալուր(10) առնէր զթագաւորն(11). թէ պարտ է զՏեառնընդառաջն ըստ ծննդեանն առնել(12) և ոչ ըստ յայտնութեանն քառասնօրեայ։ Որում հաւանեալ՝ գրէ թուղթ յԵրուսաղէմ առ Յաստոս հայրապետն և առ Երուսաղեմացիսն ամենայն, զի փոխեսցեն զաւուրս Տեառնընդառաջին աւրն ըստ ծննդեանն ի քսան և ի հինգն դեկտեմբերի ամսոյ, որպէս և յայլ քաղաքսն սովորեալք(13) առնեն զայս։*

*Եւ լուեալ հայրապետին զհրաման կայսերն, յոյժ խռովեցաւ, և ամենայն Երուսաղեմացիքն ընդ նմա, և ամենայն քաղաքն առ հասարակ ի սուրբ Եկեղեցին(14) ընթանային, արք և կանայք, երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք, և զպաղատանս ամենատեառնն մատուցանէին, բազում հառաչանաւք և արտասուաւք։ Եւ զամենասուրբ Կոյսն աստուածածինն և զամենայն սուրբսն ի բարեխաւսութիւն և յաւգնութիւն(15) անձանց կարդային։ Եւ ուխտեցին միաբան(16) զմահ ընդունել վասն այնորիկ, քան թէ անցանել ըստ սուրբ հարցն կարգան և(17) աւանդութիւնս։ Եւ այսպէս վառեցան զինու սուրբ Հոգւոյն, և եղեն միախորհուրդք(18) ի սէր աստուածութեանն, և կային ընդդէմ հրամանի թագաւորին Երուսաղեմացիքն։ Իսկ կայսրն, իբրև լուաւ եթէ ստունգանեցին(19) զհրամանն, զդուքս ոմն առաքեաց յԵրուսաղէմ, զի զՏեառնընդառաջն ըստ ծննդեանն արասցեն բռնաբար(20)։*

*Եւ իբրև եհաս զաւրն(21) ի քաղաքն Երուսաղէմ, ոչ անսացին(22) հրամանի թագաւորին, այլ վառեցին ջահս և մոմեղէնս*

---

Բնագիր Ա = Ձեռ. Ս. Յ. Թ. 3152, էջ 315. թկ. 1384, բոլորգիր — Հմմտ. Բ = Ձեռ. Ս. Յ. Թ. 71, էջ 486. թկ. 1321. բոլորգիր — Գ = Ձեռ. Ս. Յ. Թ. 1-ա էջ 190. թկ. 1419, բոլորգիր — Դ = Ձեռ. Ս. Յ. Թ. 1-4-ա, էջ 450, թկ. 1737, նոտրագիր — Ե = Ձեռ. Ս. Յ. Թ. 764, էջ 148, նոտրագիր, համրնթաց է Ա օրինակին։

(1) Յուստիանոսի, ԱԲԳԴԵ.

(2) երրորդի, երկրորդի, Դ. Չունին, ԱԳ.

(3) ամի, Չունին, ԲԴ.

(4) որպէս, Չունի, Բ.

(5) հօր, Չունին, ԲԳԴ.

(6) բնակաւ, բնակչաւք. ԱԲԵ

(7) սատանայ, Չունին, ԱԴԵ.

(8) եղծանել, լուծանել. ԱԵ.

(9) եղև չար խորհուրդ հրամանի, Դ.

(10) բանսալուր, բանս լսելոյ, ԱԵ. Չունի Դ. եկաւ, Բ.

(11) թագաւորին. Դ.

(12) կատարել, Դ.

(13) ոչ սովորութեամբ, Ա. ոչ ճշմարտութեամբ, Դ.

(14) Եկեղեցին, Դ.

(15) յաւգնականութիւն, ԲԳԴ.

(16) միահամուռ, ԳԴ.

(17) կարգան և, Չունին, ԱԵ.

(18) միախորհ, Ա.

(19) անկանեցին, Դ.

(20) բռնաբար, Չունի, Բ.

(21) հրամանն, ԱԵ.

(22) անսային, ԳԴ.

digitised by A.R.A.R.@

և եկին ընդ առաջ(23) Տեառն(24) ի սուրբ Պրակոպս(25). կատարել զաւանդն ըստ Յայտնութեանն(26)։ Եւ զաւրն արգելոյր զնոսա, և նոքա սպասէին մահու քան կենաց։ Եւ մինչդեռ յայսմ մարտի(27) էին, յանկարծակի երևեալ նշան ի Տեառնէ, զի ի սուրբ Սիոնին ի քրիստոսազարդ սեանն(28) ջուր բղխեաց վերուստ ի վայր. և տեսեալ պաշտաւնէիցն ազդ առնէին ամենեցունց. որք միահամուռ(29) անդր հասանէին, զի տեսցեն զսքանչելիսն զոր Տէր եցոյց ի զաւրութիւն(30) քրիստոսասէր ժողովոյն(31) և յամաւթ հակառակորդացն։ Եւ աւծանէին ջրովն ամենեքեան և փառաւոր առնէին զԱստուած։ Եւ տեսեալ զքաջն և զաւրացն երկիրպագին ի սուրբ Սիոն անկանէին, և առաջի սուրբ սեանն ծունր կրկնեալ խնդրէին ի Տեառնէ զթողութիւն։ Եւ ժողովուրդքն կատարէին(32) զՏեառնընդառաջ սուրբ տաւնն, որպէս էին(33) ըստ Յայտնութեանն ի փառս Քրիստոսի։ Այս առ Յուստոսիւ(34) հայրապետաւն եղև նշանս և զաւրութիւնս։

Իսկ ի միւսում(35) ամին Մակարիոս յաջորդէր յաթոռն(36), և դարձեալ խռովութիւն յուզէր ի մերձենալ սուրբ տաւնին. զի դարձեալ զաւրս կրկին տասամիկ(37) առաքեաց կայսրն, շարժեալ ի բանսարկուէն, զի արասցեն զսուրբ Տեառնընդառաջն ըստ ծննդեանն, և ոչ ըստ Յայտնութեանն։ Իբրև եհաս զաւրն ի հայրապետն և զաւքն և այլ իշխանքն առաքեալքն ի թագաւորէն(38), և կամէին(39) առնել զՏեառնընդառաջն ըստ հրամանի կայսերն ըստ ծննդեանն բանութեամբ, ապա և(40) Երուսաղեմացիքն պնդեցան նովին հաւատով, և միահամուռն ի սուրբ եկեղեցին ընթանային(41) և անկանէին առաջի սուրբ և աստուածընկալ(42) սեղանոյն, և զձեռս ի վեր(43) տարածեալ և զարտասուս յերկիր(44) հեղլով, լային և աղաղակէին, խնդրելով վերստին(45) ի Տեառնէ զաւգնութիւն(46), որպէս յառաջ նովին եցոյց զզաւրութիւն։ Եւ էր աղաղակ մեծ և խռովութիւն Երուսաղեմացւոցն ամենեցունց(47), մինչ զի ընտրեցին(48) զմահ, որք և կանայք և մանկունք(49), քան զաւանդն խղճի կատարել։ Եւ ի սուրբ եկեղեցին ոչ լինէր ձայն պաշտաման, այլ լալոյ և աղաղակի(50)։ Եւ զաւրն զինեալ էր ի դուրս եկեղեցւոյն, ահ արկանելով։ Իսկ նոցա ոչ զկենաց փոյթ էր(51), այլ ի մահ դիմէին։

Իսկ իբրև եսես հայրապետն և զաւքն զՋերմեռանդն հաւատոյ պնդութիւնն զԵրուսաղեմի, և առ ոչինչ համարել զմահ(52), զաղաղակ բարձեալ ասեն դադարեցի խռովութիւնս և աղաղակս ի ձէնջ(53), զի որպէս Տէր հրամայեսցէ, այնպէս արասցուք։ Եւ մինչդեռ չփութեալ էին, և սատանայ խորովքն(54) զուարճացեալ(55) քըքուէր(56), եցոյց Տէր զսքանչելիս իւր։ Եղև զի եպիսկոպոսն մատուցանէր զպատարագն, ետես ազդեցութեամբ սուրբ Հոգւոյն, զի ցոլացաւ ի տեսութիւն իւր անճառելի(57),

(23) առաջ, Զուճի, Դ.
(24) Տեառն, Զուճին, Ա Ե.
(25) եպիսկոպոսն, Բ. Պրակոփսն, Գ. Պրակոպս, Դ.
(26) ըստ յայտնութեան սովորութեանն, Բ. ըստ յայտնութեան և ըստ սովորութեանն, Գ Դ.
(27) մարի, Դ.
(28) սիւնէն, Ա Ե.
(29) միահամուռն ամենեքեան, Ա Ե.
(30) ի զաւրութիւն, զօրութեամբ, Դ.
(31) ժողովրդեանն, Դ.
(32) կատարէին, Զուճի, Դ.
(33) որպէս էին, Զուճի, Դ.
(34) Յուստոսիւ, Ա Ե.
(35) ի միւս այլ, Դ.
(36) զաթոռն, Բ Գ Դ.
(37) տասնիկ, Զուճին, Բ Դ.
(38) ի բանաւորէն, Բ.
(39) կամեցան, Բ Գ Դ.

(40) ապա եւ, Յայնժամ, Գ Դ.
(41) հասանէին, Բ Դ.
(42) և աստուածընկալ, Զուճին, Ա Ե.
(43) ի վեր, ի յերկինս, Բ. Զուճին, Ա Ե.
(44) յերկիր, Զուճին, Գ Դ.
(45) վերստին, Զուճին, Բ Գ Դ.
(46) զաւգնականութիւն, Բ Դ.
(47) յԵրուսաղէմ ամենեցուն առ հասարակ, Գ Դ. ամենայն Երուսաղեմի, Բ.
(48) ընտրեցին առ հասարակ, Դ.
(49) և մանկունք, Զուճին, Բ Դ.
(50) ողբարկի, Դ.
(51) Իսկ նոքա ոչինչ զկենաց փոյթ առնէին, Բ Գ Դ.
(52) զահն, Ա Ե.
(53) ի մէնջ, Ա Ե.
(54) խորայովքն, Դ.
(55) զուարճանայր, Դ.
(56) քրքուէր, քրքրէր, Գ. Զուճի, Դ.
(57) զի զաւրութիւն իւր անճառելի ի նմանութիւն հրեշտակի ցոլացեալ ընդ սուրբ զաւան

digitised by A.R.A.R.@

ի նմանութիւն հրեշտակի. ի սուրբ Գողգոթայ. ի սուրբ գուռն Տեառն. և եհաս մինչև ցերկրորդ սիւն(58) սրբոյ մատրանն. և եհար զաջ բազուկն իւր ի նմա, և անդէն բևեռեցաւ(59) աջ Տեառն ի վերայ սեանն. և ինքն աներևոյթ եղև։ Եւ նա անկաւ ի վերայ երեսաց իւրոց. և ի զարմացման մեծի եղեալ՝ յարուցեալ պատմեաց զանցսն։ Եւ լուեալ(60) ամենեցուն փառաւոր առնէին զԱստուած ի վերայ անպատում սքանչելեացն՝ որպէս զուարթացոյց զժողովուրդն վտանգեալ, և կորացոյց զժողովուրդն հակառակող(61)։

Եւ մինչդեռ յայսմ մեծի զարմացման էին ամենեքեան, ա՛յլ նշան երևէր։ Զի ամենասուրբ կոյսն Մարիամ աստուածածինն տպաւորեցաւ ի նմին սեանն. ունելով զմանուկն Յիսուս ի գիրկս իւր(62). և խաչ մի ծիրանի՝ յաջոյ ձեռին Տեառն. և խաչ մի ի միւսում սեանն երևեալ։ Եւ զայս նշան ամենեքեան տեսին(63) արդարք և մեղաւորք(64) առհասարակ. ի քսան և ինն մեհեկանի(65) ամսոյ, յաւուր Կիւրակէի(66), ի ժամ պատարագին. և բազում ուխտաւորք և(67) ախտաժետք բժշկեցան յաւուրն յայնմիկ։ Զի եղև բարի(68) նշանս այս բժշկութեան նախ(69) ի վերայ Հայոց։

Զի կին մի ի Մոկաց, Սողոմէ անուն(70), որոյ քսան և երեք ամք էին(71) զի կարկամեալ էր. եկն սողալով մերձ ի սիւնն. և բազմութեանն առընթեր կացեալ(72) տեսանել թէ զինչ լինիցի։ Եւ իբրև մերձեցաւ ի սիւնն յոր կայր աջ աստուածութեանն. և սուրբ Կոյսն հանդերձ մանկամբն Յիսուսիւ, և բուռն եհար զսիւնէն(73) պինդ հաւատով, և իսկոյն յարուցեալ եկաց ի վերայ ոտից իւրոց ողջ(74). և ետ ողջոյն ամենեցուն(75), և գնայր և գոհանայր զԱստուծոյ(76), և փառաւոր առնէր զԱստուած(77)։ Եւ ամենեքին տեսին զկինն բժշկեալ և ի մի բերան փառաւորեցին զՔրիստոս(78)։

Էր զի զգիւահարսն ածէին մերձ ի սիւնն(79) ուր էր պատկերն և նորա աղաղակէին(80) և ասէին. Տիրուհիդ Մարիամ, զի՞ երևեցար զմեզ հալածել(81)։ Եւ անդէն զարհուրեալ չարմալէին, և վաղվաղակի չքանէին ի նոցանէ յորս էին։ Եւ յարուցեալ տեսանէին զսուրբ աջ աստուածութեան, և զսուրբ Կոյսն և զՅիսուս, և կնքէին զինքեանս(82) նշանաւ սուրբ խաչին, և այլ ոչ եւս դառնային ի նոսա, և տային ողջոյն ամենեցուն(83), և փառաւոր առնէին զԱստուած ի վերայ այսոցիկ։ Եւ ամենեքեան ուրհնէին զԱստուած ի վերայ մեծամեծ սքանչելեացն որ երևեցանն։

Եւ ահիւ(84) և դողութեամբ(85) կանխեալք յաղաւթս և ի խնդրուածս, զցայգ

---

Տեառն. Բ. և տեսանէր ողջելութեամբ սուրբ Հոգւոյն ցոլացեալ զաւրութիւն ինձ անճառելի. Գ. և տեսանէր ազդեցութիւն ինձ անճառելի. Դ.

(58) յերկրորդ գուռն. Բ Գ. յերրորդ գուռն. Դ.

(59) երևեցաւ. Ա Բ Ե.

(60) տեսեալ. Ա Բ Գ.

(61) և կորացոյց զժողովուրդն հակառակող. Չունին, Ա Ե. և կուրացոյց զհակառակորդսն. Բ.

(62) զսուրբ մանուկն ի գիրկս իւր, Բ. ունելով զՏէրն առա նորածին ի գիրկս իւր. Գ.

(63) Եւ զայս ամենայն նշանս տեսին, Բ Դ.

(64) անզգաւորք. Ա.

(65) ի մեհեկի. Դ.

(66) յաւուր Կիւրակէի. Չունի, Ա.

(67) ուխտաւորք և. Չունին, Բ Գ Դ.

(68) բարի. Չունին, Ա Ե.

(69) նախ. Չունին, Ա Ե.

(70) Զի կին մի անուն Սողոմէ ի Մոկաց. սողուն. Բ. Զի կին մի Սողոմէ անուն ի Մոկաց. Գ. Զի կին մի սողուն, ի Մոկաց. Սողոմէ անուն, Դ.

(71) քսան և եթն ամ էր, Դ.

(72) եղեալ. Ա Ե.

(73) զսիւնէն. Բ.

(74) ողջ, ուղիղ հաւատով ողջացեալ. Ա Ե.

(75) և ետ փառս Աստուծոյ. Ա Ե.

(76) և գնայր և աւրհնէր զԱստուած ամենեքումբք հանդերձ. Ա Ե. և գնայր և գոհանայր և աւրհնէր զԱստուած. Բ.

(77) և փառաւոր առնէր զԱստուած. Չունին, Ա Բ Ե.

(78) Եւ որք ոչ էին մերձ ի սիւնն՝ տեսին զկինն բժշկեալ. և ի մի բերան փառաւոր առնէին զԱստուած. Ա Ե. Եւ որք ոչ էին մերձ տեսանել զկինն բժշկեալ. ի մի բերան փառաւոր առնէին զՏէր Աստուած. Գ. Չունի բնաը, Դ.

(79) նաև զգիւահարսն ածէին մերձ ի սիւնն, Բ. էր զի զգիւահար մի բերին մերձ ի սեանն. Դ.

(80) յոր հայէին պատկերքն. աղաղակէին, Գ. և հայէին ի սիւնն՝ աղաղակէին. Ա Ե. որ հայէին ի պատկերն. աղաղակէին, Դ.

(81) որ զմեզ հալածե՞ս. Բ Գ Դ.

(82) զանձինս իւրեանց. Գ Դ.

(83) միմեանց. Ա Ե.

(84) Եւ ահիւ ... Երուսաղեմի. ամբողջ պարբերութիւնը չունի, Գ.

(85) խնդութեամբ. Դ.

digitised by A.R.A.R.@

և զցերեկ փոխանակով ի վերայ անպատում սքանչելեացն և պարգևացն Քրիստոսի[86]։ Զի դիւահարքն բժշկէին, կոյրքն լուսաւորէին, կաղքն գնային, խուլք լսէին[87], անդամալոյծքն առողջանային և փառաւոր առնէին զԱստուած, որ այսպիսի շնորհս եղոյց որպէս ի յայտնութեան իւրում և ի գալստեան[88]. և արար խաղաղութիւն, և բարձաւ ամպրոպն խռովութեան[89] Երուսաղեմի։

Եւ կատարեն զՏեառնընդառաջին սուրբ տօնն ըստ Յայտնութեանն, ըստ գրութեան սրբոյ առաքելոյն Յակոբայ[90]. և մարտուցելոյքն ի խաղաղութիւն գաւառային և Երուսաղէմ յուրախութիւն[91] հանդերձ գոհութեամբ ի փառս Աստուծոյ։

Զի ըստ մարգարէութեանն էր տեսանել, ի Սիոնէ ելանել աւրէնք և բան Տեառն յԵրուսաղեմէ։ Եւ դարձեալ եթէ աղբիւր ի տանէ Տեառն ելցէ և արբուսցէ զձորն վիճակաց, զի յԵրուսաղեմէ բաշխեաց զպարգևս յազգս ամենայն։

Զայս վասն զգուշութեան գրեցի ի Հայս, զոր ինձէն[92] իսկ ականատես եղեալ մեծամեծ սքանչելեացն զոր Տէր եղոյց[93]. և զի մանաւանդ[94] զգուշանայցէք ի չար խորհրդոց անտի, որք աստարանութեան բանիւք[95] խոտորին ի կարգադրութենէ ընթերցուածոց[96] սրբոյն Յակոբայ, և այլափոխեն զտառս և[97] զտաւնս։ Այդ զուք որպէս ուսարուք[98]՝ ի նմին կացէք և մնացէք[99] մինչև ի գալուստն Տեառն։

Արդ որք սրբութեամբ հաւատովք և արդարութեամբ[100] կատարեն զսուրբ տաւնս, զոր ինչ և խնդրեսցեն ի վերուստ[101], տացի նոցա ի վերնատուողէն, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին և միշտ Կուսին Մարիամու, և աղաւթիւք սուրբ ծերունւոյն Սիմէոնի, և խնդրուածովք[102] մարգարէուհւոյն Աննայի զի և այժմ և յաւուրն երեւման, ընդ առաջ եկեալք մաքրութեամբ և արդարութեամբ, ժառանգեցուք զխոստացեալ[103] երանութիւնն, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս[104]։

Այս շահեկան Թուղթը առաջին անգամ հրատարակած էինք 1953ին, մեր Ձեռագրաց Ցուցակին երկրորդ հատորին մէջ (էջ 34–36), համաձայն թիւ 154 ձեռագրին, որ զերծ չէր թերութիւններէ։ Այժմ պարագան նկատի առնելով պատշաճ սեպեցինք հրատարակել «Սիոն» ամսագրին մէջ թուղթիս աւելի յաւ մէկ օրինակը, համեմատելով մեր մօտ գտնուող ուրիշ չորս ձեռագիրներու հետ, և նշանակելով կարևոր տարբերութիւնները։

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

---

(86) եւ պարգեւացն Քրիստոսի, Տեառն, Դ.

(87) կաղքն գնային, խուլք լսէին, Զուճի, Դ.

(88) զի այսպէս զաւրութիւն շնորհաց երևեցոյց Տէր, որպէս ի գալստեան իւրում և յայտնութեան, Բ. զի այսպէս զօրութիւն շնորհաց երևեցոյց յայտնութեամբ իւրով և գալստեամբն, Դ.

(89) ամպրոպն խռովութեան, աղմկեալ խռովութիւնն, Դ.

(90) ըստ ընթրութեան սրբոյ առաքելոյն, ԱԵ.

(91) գաւառային և Երուսաղէմ յուրախութիւն, Զուճի, Դ.

(92) անդէն, ԳԴ.

(93) եղոյց իմ աղքատութեանս, Բ.

(94) մանաւանդ, Զուճին, ԱԲԵ.

(95) անարանութեան բանիւք, Դ. արտարանութենէ բանից, Բ.

(96) ընթերցուածոց, Զուճի, Դ.

(97) զտաւնս և, Զուճին, ԲԳԴ.

(98) լուարուք, Դ. ընկալաք, Դ.

(99) և մնացէք, Զուճին, ԲԳԴ.

(100) Արդ որք հաւատով և արդարութեամբ, Բ. Արդ որք հաւատով, Գ. որք հաւատով և մարդասիրութեամբ, Դ.

(101) զինչ և խնդրեսցեն յանուն Տեառն, Դ.

(102) խնդրուածովք, Զուճին, ԱԵ.

(103) զխոստացեալ, Զուճին, ԲԳԴ.

(104) զերանութիւնն ընդ ուղղափառսն ըստ անսուտ խոստման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որում փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն, Բ. ընդ ուղղափառսն՝ որ անսուտ խոստումն է ի Քս. Յս. ի Տէր մեր՝ որում փառք յաւիտեանս, Դ.

digitised by A.R.A.R.@